

զաւուր ջոջըցաւ, էղաւ տըննուհինգ տարեկան տղայ, ուրեն ձի 'մ' սարքեց ու կ'երթէր ավըղուշ էնելու:

Յերեկ կ'երթէր ավըղուշ էնելու, գիշեր կիգէր ուր տեղ կ'քնէր:

Էղաւ օր մէկ առուծ փայդա էղաւ ճամբընընու վըէն. էր թըցող, գալացող բիրադի կտրեց, մարդ չըր կեարնայ ճամբու հետ էրթէր:

Սանասար, ուր իշխաններ նստած միտք էրեցին թէ—Ի՞մալ պրի մենք ապրինք, թանգուտեն ընկաւ Սասունայ մէջ:

Մ՛հեր հարցուց ուր հօր թէ—Յո՞րի թանգուտեն կ'ընկնի:

Հէր լէ ըսեց թէ—Առուծ մի փայդա էղի ճամբու վըէն, ճամբորդ կտրեց, էրթցող գալացող չ'կայ:

Ըսեց.—Ի՞մալ առուծ, առուծն ի՞նչ ա, ըսեց:

Ըսեց.—Ջանաւար է, մարդ կ'ուտէ:

Ըսեց.—Հեռուանց մարդ կ'ուտէ, չէ՞ մօտանաս՝ նոր:

Հէր լէ վերցուց.—Չէ, օր մօտեցար, կ'ուտէ:

Ըսեց.—Հմալ է, ես լուսուն կ'երթամ, ընձի թող էնի ջարտէ:

Հէրն ըսեց.—Ո՞րտի, մ'երթա, քըզն կ'ջարտէ:

Անկաջ չ'էրեց ու գնաց:

Գնաց ու մօտեցաւ առուծին:

Առուծ լէ տեսաւ, օր մարդ մի էկաւ, էլաւ, էկաւ ընդուր

առէջ:

Էրկու մարդ լէ տղի հետ գացած էն. էն էրկու մարդ հե-

ռու կայնան, տղէն մինակ գնաց:

Գնաց, ու առան իրար:

Մ՛հեր առուծին սպանեց, քաշեց էրկու կտոր էրեց, մէկ դրեց

ճամբու էն խրաղ, մէկ էն խրաղ:

Էն էրկու մարդն օր հետ գացած էն, էկան կայնան Մ՛հերի

կուշտ:

Մէկ մարդ ջուաբ բերեց Սասուն Մ՛հերի հօր թէ—Քու աչք

լուս էղնի, քու տղէն առուծին սպանեց: